

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ (տևողությունը 60 րոպե)
11-12-րդ դասարաններ**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Միասեռ ծաղիկներ են բնորոշ.

- 1) կարտոֆիլին
- 2) վարունգին
- 3) ոլոռին
- 4) խնձորենուն

2. Հերձանցքները փակվում են

- 1) ածխաթթու գազի պակասի դեպքում
- 2) թթվածնի պակասի դեպքում
- 3) ջրի պակասի դեպքում
- 4) հանքախն նյութերի պակասի դեպքում

3. Ձկների արտազատման օրգաններն են.

- 1) երիկամները
- 2) մետանեֆրիդիումները
- 3) մալպիգիան անոթները
- 4) կոյանցքը

4. Թվարկած կենդանիներից ո՞րն է հերմաֆրոդիտ

- 1) ջրալուն
- 2) խաչասարդը
- 3) ութոտնուկը
- 4) խաղողի խխունջը

5. Որոշ արյունատար անոթներում կան փականներ: Դրանք տեղակայված են.

- 1) Ջարկերակներում
- 2) գարկերակիկներում
- 3) երակներում
- 4) երակիկներում

6. Շնչառական կենտրոնը գտնվում է

- 1) ենթատեսաթմբում
- 2) տեսաթմբում
- 3) երկարավուն ուղեղում
- 4) ուղեղիկում

7. Էվոլյուցիայի տարրական միավոր է հանդիսանում.

- 1) բջիջը
- 2) օրգանիզմը
- 3) տեսակը
- 4) պոպուլյացիան

8. Ջարկերակային ճնշման բարձրացման ժամանակ սրտի կծկումների հաճախականությունը ռեֆլեքսորեն.

- 1) մեծանում է
- 2) նվազում է
- 3) չի փոխվում
- 4) մեծանում է, իսկ հետո նվազում է

9. Գլխուղեղի առաջնային տեսողական կեղևը գտնվում է.

- 1) Ճակատային բլթերում
- 2) քունքային բլթերում
- 3) գագաթային բլթերում
- 4) ծոծրակային բլթերում

10. Ո՞ր վիտամինի պակասի դեպքում է խախտվում հանքային նյութերի կազմը ոսկրերում:

- 1) A
- 2) B
- 3) C
- 4) D

11. Էուկարիոտ բջիջների կորիզի քրոմատինի հիմնական բաղադրիչներն են.

- 1) ԴՆԹ և ՌՆԹ
- 2) ՌՆԹ և սպիտակուցներ
- 3) ԴՆԹ և սպիտակուցներ
- 4) ԴՆԹ և լիպիդներ

12. փՌՆԹ-ի անտիկոդոնի կազմի մեջ է մտնում.

- 1) մեկ նուկլեոտիդ
- 2) երկու նուկլեոտիդ
- 3) երեք նուկլեոտիդ
- 4) չորս նուկլեոտիդ

13. Անաէրոբ պայմաններում ո՞ր գործընթացը չի կարող տեղի ունենալ կենդանական բջիջներում

- 1) ԴՆԹ-ի սինթեզը
- 2) ԱԵՖ-ի սինթեզը
- 3) գլիկոզենի սինթեզը
- 4) ճարպերի օքսիդացումը

14. Մազնեզիումի իոնները մտնում են.

- 1) հեմոգլոբինի կազմի մեջ
- 2) ինսուլինի կազմի մեջ
- 3) քլորոֆիլի կազմի մեջ
- 4) թիրօքսինի կազմի մեջ

15. Օրգանական միացությունների օքսիդացումը մինչև CO_2 տեղի է ունենում միտոքոնդրիումների .

- 1) մատրիքում
- 2) միջմեմբրանային տարածքում
- 3) արտաքին թաղանթի վրա
- 4) ներքին թաղանթի վրա

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ տիպի գամետ կարող է առաջացնել $aabb$ գենոտիպով գետնամորու բույսը:

17. $Aa \times Aa$ խաչասերման արդյունքում ստացած սերնդի քանի՞ տոկոսն է հտերոզիգոտ:

18. Քանի՞ տիպի գենոտիպ կարելի է սպասել սերնդում եթե խաչասերել երկարացած և գծավոր (ռեցեսիվ հատկանիշներ) պտուղներով երկու հոմոզիգոտ բույսեր :

19. Քանի՞ տիպի գենոտիպ կարելի է սպասել սերնդում եթե խաչասերել սև սերմնամաշկով և դեղին ունդերով (դոմինանտ հատկանիշներ) լոբու $AABb$ գենոտիպով բույսը սպիտակ սերմնամաշկով և կանաչ ունդերով բույսի հետ:

20. Մարդու մոտ քրոմոսոմների բացակայությունը պայմանավորված է X քրոմոսոմում գտնվող սեռի հետ շղթայակցված ռեցեսիվ գենով: Ընտանիքում հայրն և որդին ունեն այդ անոմալիան, բայց մայրն առողջ է: Քանի՞ տոկոս է դստեր մոտ այդ անոմալիայի իհայտ գալու հավանականությունը: